



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը
տվյալ առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցչուհի՝ Մերինե Բագրատյան

Ուսումնական հաստատություն՝ «Բերդիկի միջն. դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| <u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</u> | 3 |
| <u>1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ</u> | 5 |
| <u>2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ</u> | 7 |
| <u>ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ</u> | 15 |
| <u>ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</u> | 17 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի կարևորությունը: Դասը ամբողջական համակարգ է և հանդիսանում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Դասի նկարագրությունը դիպուկ և պատկերավոր ձևով տալիս է Մ. Վերգալինը, ով գրում է. “Դասը արեգակնային համակարգ է, որի շուրջ, որպես մոլորակներ, պտտվում են ուսուցման կազմակերպման բոլոր ձևերը”¹:

Դեռ անցյալ դարի 50-ականներին ամերիկացի ականավոր մանկավարժ Բենջամին Բլումը կրթական նպատակների և ճանաչողության ոլորտի մասին մի գիրք է գրել, ուր մտածողության վեցշերտանի նկարագրությունն է տվել: Նրա ներկայացրած մակարդակները, ճիշտ է, ժամանակի ընթացքում մի քանի անգամ ադապտացվել-վերախմբավորվել են, բայց հիմքում նույնն են՝ նյութի ճանաչում, մեկնաբանում, կիրառում, վերլուծություն, համադրություն, գնահատում: Մոտ կես դար անց Ռոբերտ Մարցանոն, Լորին Անդերսոնը և ուրիշներ, վերախմբագրելով Բլումի տաքսանոմիան, համադրման փոխարեն կարևորեցին ստեղծականությունը՝ ի նկատի ունենալով արդեն սովորած ուսումնական նյութերի և փորձերի կիրառմամբ նոր բան ստեղծելը: Բոլոր դեպքերում, այսօրվա կրթությունը սերտողականությունից դուրս է և նախատեսում է մի շարք հմտություններ հատկապես ճանաչողական գործընթացներում, ինչը իրական կենսական խնդիրներ լուծելու ժամանակ կօգնի սովորողին:

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի

¹ Ամիրջանյան Յու., նշվ. աշխ. էջ 196

բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը աշխարհագրություն առարկայի դասավանդման գործընթացում:

Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում բացահայտվել են հետևյալ **խնդիրները՝**

- Ուսումնասիրել ինտեգրված դասի էությունը
- Բացահայտել ինտեգրված դասի մեթոդների կիրառումը

1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Դասն ունի մի շարք նշանակալից կողմեր՝

- պարապմունքները տարվում են աշակերտների հաստատուն, կայուն խմբի հետ, որի կազմը պահպանվում է մինչև դպրոցն ավարտելը
- դասարանների ձևավորումը կատարվում է՝ ելնելով աշակերտների տարիքային առանձնահատկություններից և նրանց իրական ուսումնական հնարավորություններից
- դասարաններում պարապմունքները տարվում են ըստ նախօրոք կազմված դասատախտակի և ուսումնական պլանի ու ծրագրի,
- դասի ընթացքում ուսումնական բոլոր աշխատանքները ղեկավարում է ուսուցիչը:

Ժամանակակից դասին ներկայացվում են մի շարք պահանջներ՝ կրթական, դաստիարակաչական, զարգացնող և կազմակերպչական:

Դիդակտիկական/կրթական/ պահանջներն իրականացնելու համար ուսուցիչը նախօրոք որոշում է դասի հիմնական խնդիրները, առանձնացնում գլխավոր և երկրորդական տարրերը, դասերի համակարգում որոշում յուրաքանչյուր թեմայի և դասի տեղը, որոշում է դասի բովանդակությունը՝ հաշվի առնելով աշակերտների իրական հնարավորությունները: Կրթական պահանջներն իրականացնելու համար դասն սկսելուց առաջ ուսուցիչը ընտրում է ուսուցման արդյունավետ մեթոդները և հնարները: Օգտագործվում են միջառարկայական կապերը՝ հաշվի առնելով աշխատանքի մանկավարժա-հոգեբանական պայմանները:

Դասի դաստախարակաչական պահանջները իրականացնելու համար ուսուցիչը դնում և լուծում է դաստիարակչական խնդիրներ՝ բարոյական, գեղագիտական, գաղափարաքաղաքական և այլն: Այս ընթացքում աշակերտների տեսածի, լսածի և դասի

ընթացքում կիրառած մեթոդների արդյունքում երեխայի մոտ ձևավորվում են որոշակի կարծիքներ, հայրենասիրական և մարդասիրական հայացքներ, բարոյական որակներ, գեղագիտական ճաշակ և այլն:

Դասի զարգացնող պահանջները իրականացնելու համար ուսուցիչը ձևավորում է սովորողների ճանաչողական հետաքրքրությունները՝ այս նպատակով կիրառելով գիտելիքների խթանող, մոտիվացնող, արթնացնող մեթոդներ և հնարներ²: դասի ընթացքում ուսուցիչը հետևում է աշակերտների դրսևորած առաջադիմությանը, ուսումնասիրում նրանց կարողությունները, մտածողության տեսակները, հիշողությունը, ուշադրությունը և հոգեկան այլ գործընթացներ:

Ուսուցիչը պարտավոր է շարունակ ինքնակրթվել, կատարելագործել իր մանկավարժական վարպետությունը և հետևել իր մանկավարժական տակտին: Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր:

Յու. Ամիրջանյանը նշում է, որ ժամանակակից դասին ներկայացվում են նաև կազմակերպչական պահանջներ:

Դասը դասակարգում են ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների և բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի

² Ամիրջանյան Յու., նշվ. աշխ. Էջ 198

կազմակերպման միջոցների: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնացվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետևյալ տիպերը՝

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)
3. Ընդհանրացման և համակարգման դաս
4. Համակցված դաս
5. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս:

2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Դասի ոչ ավանդական ձևերն են՝

1. Դերային խաղեր,
2. Դաս-ներկայացում,
3. Հեքիաթային դիպաշարի կատարում,
4. Ստուգատես,
5. Մտապատկերների դաս,
6. Դաս-խաղ,
7. Գործարար խաղ,
8. Դաս-ստուգարք,

9. Դաս-փոփոխություն,
10. Դաս-ճանապարհորդություն,
11. Կլոր սեղան կամ կոնֆերանս ,
12. Դաս-մրցույթ
13. Դաս-մամլո ասուլիս,
14. Բաց մտքերի դասավանդման,
15. Դաս-երկխոսություն,
16. Դաս-վիկտորինա,
17. Խաղ «Հետաքննությունը վարում են գիտակաները»,
18. Արդիական հարցազրույցներ,
19. Գիտելիքների աճուրդ,
20. Իմիտացիոն-դերային մոդելավորում
21. Դաս-բանավեճ,
22. Ուսանողների մտածելակերպի մոդելավորում,
23. Դաս-մրցաշար,
24. Դերային խաղ-բիզնես,
25. Դաս-Էվրիկա,
26. Դաս-դասախոսություն,
27. Խաղ "Կախարդական ծրար»,
28. Միջառարկայական ինտեգրված դաս,
29. Ստեղծագործական դաս և այլն:

Ինտեգրացված դասը հանրային կրթության ձևերից մեկն է: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է: Հիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45 րոպե, ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ: «Ինտեգրում» բառը նկատի ունենք տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ ն՝ իմաստով, ն՝ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք

պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝ նպատակային դասը:

Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում: Աշխարհագրությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում գիտությունների ամբողջական համակարգում, քանի որ նրա հետազոտության օբյեկտները շատ բազմազան են. աշխարհագրական թաղանթը, նրա ոլորտները, դրանցում ընթացող երևույթներն ու գործընթացները, մայրցամաքները, օվկիանոսները, տարածաշրջանները, երկրները, հասարակական երևույթներն ու գործընթացները: Հայտնի է, որ աշխարհագրական թաղանթի առանձին ոլորտների ուսումնասիրություններով զբաղվում են նաև այլ գիտություններ՝ կենսաբանություն(կենսոլորտ), երկրաբանություն(քարոլորտ), տնտեսագիտություն(մարդոլորտ), ֆիզիկա(մթնոլորտ,քարոլորտ) և այլն: Սակայն միայն աշխարհագրության ուսումնասիրություններն են, որ ընդգրկում են աշխարհագրական թաղանթի բոլոր ոլորտները: Աշխարհագրությունը լինելով բնահասարակական գիտություն սերտորեն կապված է այլ առարկաների հետ: Անկախ տեսակից, բոլոր աշխարհամակարգերը գտնվում են փոխազդեցության մեջ, օրինակ՝ բնությունը և տնտեսությունը, կլիման և անտառը, օվկիանոսը և մայրցամաքը, օվկիանոսը և տնտեսությունը, և այլն: Ինտեգրացված դասեր կարելի է անցկացնել օրինակ աշխարհագրություն-գրականություն-պատմություն-երաժշտություն, աշխարհագրություն-քիմիա-կենսաբանություն-պատմություն և այլ առարկաներից:

Գիտությունների և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են

բնության և հասարակության մեջ առկա կապերը»³: Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և ինտեգրացված դասերը; Ինտեգրացված դասերը պիտի տարբերել միջառարկայական կապերը իրականացնող սովորական դասերից, որտեղ ուսումնասիրվում են ոչ թե ընտրովի թեմաներ /ինչպես ինտեգրացված դասերի ժամանակ է արվում/, այլ տվյալ առարկայի դպրոցական ծրագրային նյութերը: Ինտեգրացված դասերը լավ է նկարագրել Ի. Պ. Պողոսյան, գրելով. «Ինտեգրացված դասերին միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրացված դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար⁴: Մակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Մակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծագործական, հետազոտական աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական

³ Подласый И. П., Педагогика начальной школы, М. 2000, էջ 233

⁴ Федосеева В. Н., Кирюшкин Д. М., “Педагогика”, 1972, էջ 20

գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

Ինտեգրացված դասը սովորաբար նախապես պլանավորվում է: Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկն է, որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորման հետ: Հետազոտողները ինտեգրումը հասկանում են մանկավարժական գործընթացի զարգացման կարևորագույն բնագավառներից մեկը, որը կապված է անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում: Հավատարիմ մնալով ընտրված մեթոդաբանական դիրքորոշումներին, գիտնականները բացահայտում են մի շարք հասկացություններ՝ ինտեգրման գործընթաց, ինտեգրման սկզբունք, ինտեգրման գործընթացներ, ինտեգրման մոտեցում: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում: Ըստ մի շարք աղբյուրների, կան ինտեգրման ուսուցման բազմաթիվ տեսակներ, որոնք կապում են փորձառությունները, հմտություններն ու գիտելիքները՝ կիրառելով հմտություններ և պրակտիկա տարբեր չափանիշներով, օգտագործելով բազմազան և նույնիսկ հակասական տեսակետներ, հասկանալով իմաստալից տարբեր հարցեր և դիրքորոշումներ, հաստատելով կապեր խոշոր դաշտերի, ուսումնական ծրագրի, կուրսերի դասընթացի կամ ակադեմիական գիտելիքների և պրակտիկայի միջև: Ինտեգրված ուսուցումը ներառում է ավանդական առանձին առարկաների համատեղումը, ինչը հնարավորություն է տալիս նյութի ճիշտ և հեշտ հասկանալուն: Ինտեգրման գործընթացի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է: Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ, որոշելով դասընթացի բովանդակությունը, ձևերը եւ մեթոդները: Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին, պատրաստակամություն է այլընտրանքային դասի: Հաճախ դրանք դասեր են՝ ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման:

Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ: Արդյունավետ դասերը նաև լեզվական կողմնորոշում են, որոնք սովորաբար ունեն համեմատական բնույթ, օրինակ, որոշակի առումով, հայերենի քերականություն և անգլերեն լեզու:

Առանձնապես օգտակար են լինում գրականության, պատմության և երաժշտության ինտեգրացված դասերը, որոնք ընթացքում խաղ-բեմադրությունը հաճախ կազմակերպվում է գրական կամ սցենարային ստեղծագործության պլոտեի հիման վրա, այդ ընթացքում ընթերցածը, տեսածը կամ լսածը վերարտադրվում է՝ դեմքի՝ վրա՝ տարբեր արտահայտչամիջոցների՝ երաժշտական և խոսքային նրբերանգների, դիմախաղի, ժեստերի, կեցվածքի միզանսցենի (խմբավորման) օգնությամբ: Միշտ չէ, որ սցենարը խիստ կանոնակարգված է. Այն կարող է հանդես գալ որպես հենք, որի սահմաններում զարգանում է ինպրովիզացիան: Լ. Վիգոդսկին գտնում էր, որ ցանկացած խաղի մեջ առկա են բեմադրության տարրեր⁵: Ինտեգրատիվ դասը ձևավորվում է գեղարվեստական գործունեության տարբեր տեսակների միջոցով, սակայն այն միջառարկայական կապերի վրա հիմնված ամբողջական համակարգ է: Դրա կարևորագույն խնդիրը աշակերտի անձի դաստիարակությունն է, արվեստի միջոցներով նրանց արժեքային հարաբերությունների ձևավորումը: Որպես ամբողջական գեղարվեստամանկավարժական ձև, այն պետք է ունենա իր մեթոդական առանձնահատուկությունները. ապրումակցման կազմակերպում, արվեստի բարոյական-գեղագիտական էության ըմբռնում, այդուհետ՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում:

Ժամանակակից դպրոցում ինտեգրացված դասերի և նորագույն ուսումնական մեթոդների կիրառումը հնարավոր չէ պատկերացնել առանց համակարգչային

⁵ Выгодский Л. С., Воображение и творчество в детском возрасте: Психологический очерк. М., 1991.

տեխնոլոգիաների: Ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ համակարգիչը կարող է փոխել ուսուցման ընթացքը՝ դարձնելով ուսուցումը ավելի հետաքրքիր և արդյունավետ, իսկ ստացված գիտելիքներն ավելի խորացված և ընդհանրացված:

Կրթության որակի բարձրացումը հիմնականում որոշվում է ուսուցման ակտիվ գործիքների կիրառմամբ: Գիտենք, որ ակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողների ներգրավում ուսումնական գործընթաց: Այդ դեպքում սովորողը պարտադիր պետք է ակտիվ գործի և այդ գործունեության ընթացքում բացահայտի, մշակի և կիրառի ստացված գիտելիքները⁶:

Ուսումնական հաստատություններում համակարգիչների կիրառման արտասահմանյան ուսումնասիրություններն ապացուցում են ոչ միայն դրանց հնարավորությունն ու նպատակահարմարությունը, այլև համակարգիչների հաստուկ դերը երեխայի ինտելեկտուալ և ընդհանուր անձնային զարգացման գործում⁷:

Այսօր արդեն կարելի է ասել, որ ուսումնական հաստատություններում համակարգիչների ներդրումը հանդիսանում է ինտելեկտուալ զարգացման, բարոյականային որակների ձեռք բերման և երեխայի գեղագիտական զարգացման հզոր գործոն: Համակարգիչն առաջին հերթին միջոց է, որն ընդունակ է ուսումնական գործընթացին տալ բնական բնավորություն, այսինքն համակարգիչը կարող է փոխել ուսուցման ընթացքը՝ դարձնելով ուսուցումն ավելի հետաքրքիր և արդյունավետ, իսկ ստացված գիտելիքներն ավելի խորացված և ընդհանրացված: Դրա հիմքում, կարծում ենք, պետք է դնել երեխայի հետաքրքրությունն ու դրա բավարարման ժամանակակից միջոցները⁸:

Ուսուցման կազմակերպման խմբային եղանակը, իր դաս-դասարանային և դասախոսություն-սեմինարային տարատեսակներով հանդերձ, սպառել է իրեն՝ որպես հասարակության ուսումնադաստիարակչական խնդիրներն իրականացնող տեխնոլոգիա,

⁶ Водопьянова Ю. Е.. Активные методы обучения подростков как одна из форм личностно-ориентированного подхода в учебно-воспитательном процессе: На материале естественнонаучных дисциплин, 2005, էջ 2

⁷ Фельдт А.А.. Компьютерные игры: обучение или развлечение?, 2011, էջ 1

⁸ Гурьев С. В.. Использование компьютера в образовательном процессе детей дошкольного возраста, 2007, էջ 5-6

և վաղուց արդեն առաջ է եկել կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակին անցնելու անհրաժեշտությունը: Այդ անցումը ենթադրում է բավական լուրջ, արմատական, համակարգային փոփոխություններ և իրագործման հատուկ մեթոդաբանություն: Սա այն դեպքն է, երբ խնդիրը ոչ թե պատմականորեն իրագործված ձևերի վերարտադրումն է պատմահասարակական նոր պայմաններում, այլ ապագայի կառուցումը նոր ձևերի ստեղծմամբ ու արմատավորմամբ:

Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն ավանդական մեթոդների, ուսումնական նյութի յուրացումը ապահովվում է ոչ միայն ընկալման, հիշողության, ուշադրության միջոցով, այլ նաև մտքի լարման, սխալ մտածելակերպի հաղթահարման, տարբեր տեսակետների համադրման և ճշմարտության որոնման ճանապարհով: Մեթոդը թույլ է տալիս առավելագույն չափով օգտագործել ունկնդիրների փորձը, դրանով իսկ օժանդակելով ուսումնասիրվող նյութի յուրացմանը: Դա պայմանավորված է նրանով, որ խմբային բանավեճի ժամանակ ոչ թե դասավանդողն է ուսուցանվողներին մատուցում ճշմարիտը, այլ իրենք ուսուցանվողները՝ հիմնվելով սեփական փորձի վրա, հանգում են տվյալ խնդրի լուծմանը, գտնում ապացույցները, առաջադրված սկզբունքները և հիմնավորումները: Այդ ամենը նպաստում է ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, ապագա մասնագետի նախապատրաստմանը, նպատակամղմանը՝ ինքնուրույն հետազոտական աշխատանքի: Ուսումնառողները սովորում են հաղորդակցվել, համագործակցել միմյանց և ուրիշների հետ, մտածել քննադատորեն, պարզ ու հստակ ձևավորել իրենց մտքերը, կառուցել փաստարկված ապացույցների համակարգը, վիճել և ապացուցել իրենց իրավացիությունը⁹:

⁹ Մկրտչյան Մ.: Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը (ըստ Դյաչենկոյի), Մանկավարժություն, 2005/5, էջ 15-21:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժական գիտությունը սահմանում է ուսումնական գործունեության էությունը: Ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքերը պարզաբանելու համար Վ.Դյաչենկոն ներմուծում է «ուսուցման կազմակերպման ընդհանուր ձևեր» հասկացությունը: Ուսուցման կազմակերպական ձևերը պատմական տարբեր ժամանակներում տարբեր են եղել և պայմանավորված են եղել հասարակության զարգացման մակարդակով, գիտության զարգացման աստիճանով:

Կրթության դասային-դասարանային համակարգը ձևավորվել է ուշ միջնադարում: Այսօր ամբողջ աշխարհում դասային-դասարանային համակարգը հանդիսանում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Ժամանակակից դասին ներկայացվում են մի շարք պահանջներ՝ կրթական, դաստիարակաչական, զարգացնող և կազմակերպչական:

Դասի ճիշտ կազմակերպումը սկսվում է դասի համար կազմված պլանից, որում արտացոլվում են դասի ընթացքում կատարվելիք բոլոր գործողությունները: Դասի յուրաքանչյուր րոպեն պետք է օգտագործվի, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ դարձնել ուսուցումը:

Դասերը կարող ենք դասակարգել ըստ ուսուցման գործընթացը կազմակերպող դիդակտիկական նոր համակարգերի/ ըստ պրոբլեմային ուսուցման, ըստ ծրագրավորված ուսուցման, ըստ անհատականացված ուսուցման և այլն/:

Գիտությունների և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը, որոնք էլ հիմք են հանդիսանում ինտեգրացված դասերի անցկացման համար, որոնք հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը:

Ժամանակակից դպրոցում դասի արդյունավետ անցկացման և դասի նպատակների հասնելու համար պարտադիր է դարձել զանազան մուլտիմեդիական միջոցների, ինտերակտիվ քարտեզների, տեսասահիկների կիրառումը դասի ժամանակ, աշակերտների ակտիվ ուսուցման կիրառումը, աշակերտին սուկ ուղղություն տալով՝ նրան ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելն ու դասից դուրս աշակերտի ինքնուրույն աշխատանքի խթանումը: Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, երկրորդ՝ բարեփոխված հրատ, Երևան, 2005,
 2. Մանկավարժություն (թարգ. Հ. Հարությունյան), Երևան, 1948
 3. Մկրտչյան Ա.: Այրեկսի բուհական ծրագրի կենսագործումը և կրթության բարեփոխումների ընթացքը Հայաստանում, Մանկավարժություն, 2004
 4. Մկրտչյան Մ.: Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը (ըստ Դյաչենկոյի), Մանկավարժություն, 2005/ 5,
 5. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2012
- 6. Ռուսերեն գրականություն**
7. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
 8. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006
 9. Беспалько В. П. Педагогика и прогрессивные технологии обучения. М., 1995.
 10. Библер В. С.. От наукоучения – к логике культур. М., 1991
 11. Бордовская Н.И., Реан А.А. Педагогика. Учебник для вузов СПб: Издательство "Питер", 2000. - 304 с. - (Серия "Учебник нового века")
 12. Бухарова Г.Д., Старикова Л.Д., Ред. Г.Ф. Кученкова, Общая и профессиональная педагогика, Москва, Издательский центр "Академия" 2009,